651
Ц-45

891.99

Մ. ԱՒԵՏԻՍԵԱՆ.

# ԿՈՅՐ ԲԱԲԻՆ

Քերթուած

Տպարան Ն. Երևանցեանի
ԲԱԳՈՒ
1904

36 FEB 2013

Дозволено Цензурою 9 Апрѣля 1904 г. Тифлисъ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. Սեբաստացու անվան
им. А. Себастаци
19571-58

## ՍԻՐԵԼԻ ՏԻՄՈՆԻՆ

*Պատրաստել եմ այս փոքրիկ ձօն*
*Անապատիդ սեգ զաւակին,*
*Որ անապատիս բռնած ուղին՝*
*սպանում է*
*Դեպ երերի Ազատ Ոգին . . .:*

# ԿՈՅՐ ԲԱԲԻՆ

*Քերթուած*

## I.

*Երբեմն երբեմն, երբ ներկան մոռացած՝ անցեալ քաղցր յիշողութիւնների մէջ եմ փնտռում մխիթարութիւնս. երբ անցեալ օրերս յաջորդաբար կամ խառնիխուռն վերակենդանանում են. երբ կեանքիս հաճոյք պատճառող անցեալ, վաղեմի դէպքերը հմայիչ տեսք ստացած պատկերանում են աչքիս առաջին. ես յաճախ այդպիսի բոպէներում սիրում եմ մտքով մի թռիչք գործել դէպի հին, արևելեան մայրաքաղաքը, մի պտոյտ անել նրա նեղ ու խուլ, կեղտոտ ու բորբոսնած փողոցներում։ Չգիտեմ ինչո՞ւ այդ հին, արևելեան անկիւնը ինձ այդպէս գրաւում, գիւթում է։ Կարծես այսօր, այս բոպէիս աչքիս առաջն է այն երկար, անվերջ ուղտերի կարա-*

ւանը, որ անապատի միջով, լուսնեակի արծաթագոյն լուսով բոլոր-պատուած, հանդարտ առաջ է ընթանում։ Նրանց դանդաղ ընթացքը, զանգակների ձայնը, ուղտապանի երբեմնեան զիլ, մելամաղձիկ երգը, որ տարածւում, թաղւում, անհետանում է շրջապատի ամայութեան ու լռութեան մէջ—ինձ գերում, խոկումների աշխարհն են դցում։ Ցիշում եմ Փրդուսոն. Զան-նամայի Զոհակներն ու Ռուստամները պատկերանում են առաջիս։ Կեանքի դանդաղութեան այդ ծովում կարծես մեղանչում եմ բը նութեան դէմ քառաձի կառքի մէջ նստած արագ սլանալով. հրամայում եմ կառապանիս դանդաղ, շատ դանդաղ քշել ձիերին. նա զարմանում է ինձ վրա, որ մի քանի բոպէ առաջ խոստանում էի առատօրէն վարձատրել, միայն թէ մարակին ոյժ տար, իսկ այժմ ինքս եմ պահանջում դանդաղ ընթանալ. ուելի դանդաղ, ճիշտ այնպէս, ինչպէս կառաւանն է շարժւում։

Չեմ հասկանում ես նրանց ոչ փսփսոցը և ոչ զիլ մեղեդու ելևէջները, բայց դրանք ինձ հետաքրքրում են. շուրջս անապատ է, սակայն ես այդ անապատում փնտռում եմ իրեր, առարկաներ,—անցեալ դէպքերը պատմող հոգոր կոթողներ . . . բայց ոչինչ, ոչ մի նշան չկայ, որ ապացուցէ թէ այստեղ ապրել են, կամ ապրում են մարդիկ։ Ինչու է հետաքրքրում ինձ այս անապատը իւր ամայութեամբ ու լռութեամբ . . . Արդեօք սա չէ՞ Զապուհների ու

Յաղկերտների բոյնը, Արշակների ու Արտաշէսների գերեզմանը . . . Ու ես մտքով թռչում եմ մի քանի դար դէպի յետ, կարծես սիրելի են ինձ այդ ժամանակները իրանց ահռելիութեամբ ու վայրենութեամբ լի ամեն տեսակ փոթորկալից անցքերով...:

Ահա այն բնակարանը, որ ինձ ծառայում է թէ իբրև կաբինետ, թէ ճաշարան և թէ ննջարան: Փոքրիկ սենեակ է, ողողուած ճրագի աղօտ լուսով. ամեն երեկոյ ընկերներս այդտեղ են հաւաքւում խօսելու, վիճելու . . . անվերջ վիճաբանութիւն՝ առանց ծայրին հանդելու. տրամաբանութիւն-առանց եզրակացութեան: Խօսում ենք, ողեորւում, վեհ, աղնիւ ոգեորութեամբ՝ համոզուած թէ երկրագունդը մեր մի խօսքի զօրութեամբ բոպէապէս կըփոխէ իւր դիրքը, մակերեոյթը. խօսում ենք ճգնաւորի հաւատով, որ համոզուածէ թէ մի խօսքով լեռներ պիտի շարժէ: Ահա Մ. ձեռքերը շփելով անց ու դարձ է անում սենեակում և բայլերին համընթաց խօսքեր է հեղեղում, առանց ժամանակ տալու մեզ թեթեւացնել սրտներիս վրա ծանրացած խօսքերի բեռը. մինչև այսօր ականջիս են դարկում նրա անկեղծ յուզմունքի ձայն ու հառաչը, կամ թէ բերկրութեան ուրախ բրբիջը, որ մեզ էլ համակերպում էր խօսակցի տրամադրութեամբ: Նրա հզօր, խիզախ ու յանդուգն ձայնը, որ դիտեմ, տարածւում ու թաղւում էր հին քաղաքի ճահճացած մթնոլորտի մէջ առանց արձագանք յետ բերելու. մինչև օրս էլ լսելիքս փայ-

փայում է։ Ես յաճախ ընակարանս համեմատում եմ անմահ Բաֆֆու նկարագրած Պարոյր Հայկազնի սենեակին—Աթէնքում։ Պարոյր իւր ընկերներով ընակւում էին այնտեղ իրանց խաւար հայրենիքի համար մի պայծառ ջահ, բերելու, իսկ մենք ապրում էինք այստեղ՝ շրջապատի թանձր խաւարը լուսաւորելու մեր բերած փոքրիկ լուսով . . . ։

## II.

Գիշեր է։ Արբայանիստ քաղաքը վաղուց արդէն մրափում է Մօրփէոսի գրկում. ոչ մի ձայն չըկայ, բացի գիշերապահների երբեմնեան զիլ ոռնոցից. չնայելով որ արդեւուած է ժ. 10-ից յետոյ անցնել փողոցներով, բայց ընկերներս չեն ուզում տուն գնալ. ժամը 12-ն, է իսկ մենք դեռ վիճում ենք. „Երէկ, “ „այսօր“ „և“ „վաղը“—ահա մեր վիճաբանութեան նիւթը։ Ամեն մէկը մեզանից աշխատում է շատ խօսած լինել և երբէք ինքնակամ չէ ընդհատում, մինչև որ մի ուրիշը հերթի օրէնքը մէջ չէ գցում, կամ թէ առանց հերթի՝ խօսքերի նոր պաշար հաւաքած հրապարակ չի շպրտում. մի ուրիշը չսպասելով հերթին, կամ աւելի ճիշտն ասած չըսանալով՝ ստիպուած լեզուն մի կողմն է գնում և ձեռքերով է սկսում խօսել. երրորդը մի ձեռքով սրա բերանն է փակում, միւսով ուրիշին, որպէսզի լեռնաշատ վիշտը, սրտի վրա ծանրացած խօսքերի

բեռը տուն չը տանէ . . . բոլորն են խօսում և նրանց լսում է միայն լուռ, քնած շրջապատը. ու նրանց խօսքերին օրո՞ր, անվերջ օրօրը՝ասում։

— Սա՛ւս, սուս, յանկարծ կայծակնահար եղածի նման մէջ եմ ընկնում ես—լսեցէք տղայք։ Նրանք ի հարկ է ինձ ականջ չեն դնիլ, բայց դրսից եկող ձայնը բոլէ՛ապէս նրանց էլ դիւլմում է . . . ։

Այ՛, շատ եմ սիրում յիշողութեանս մէջ վերակենդանացնել այս պատկերները, բայց աւելի սիրում եմ յիշել այն գէ՛լ, ջղերիս վրա սաստիկ ազդող եղէ՛ջները, որ ամեն երեկոյ, ամեն գիշեր լսում էր փողոցում։ Ես արդէն սովորել էի տարբերել այդ քաղցր ձայնը բազմաթիւ նոյնանման ձայներից. այդ ձայնը ինձ գերում, կախարդում, ըզմայլմունք էր պատճառում։ Շատ էի ցանկանում տեսնել այն էակին, որի լալահառաչ կրծքից դուրս էր թռչում այդ արբեցուցիչ մեղեդին. տեսնել, խօսել նրա հետ, ծանօթանալ նրա սրտին և ըմբռնել երգի խոստը. արդեօք խօսքերն էլ այնքան ազդեցիկ են, միտքն էլ այնքան կաշկանդող է, որքան ձայնը։

— Սա՛ւս կացէ՛ք, Բաբին է ձայնեց Մ. բոլորի խօսքերը սառան շրթունքների վրա. դժգոհ՝ որ շրկարողացան վերջացնել ասելիքները, նրանք լռեցին և հետզհետէ հանդարտուեցան։

Ձայնը այժմ աւելի պարզ էր լսւում։

—Ո՞վ է այս երգիչը, տղա՛յք հարցրի ես.

—Կոյր Բաբին է, եղաւ պատասխանը

— Իսկ ո՞վ է կոյր Բաբին, կամ ի՞նչ է երգում

— Աշուղ է, այնպիսի աշուղ, որից հազարաւորներին կը հանդիպես Թէհրանում. իսկ թէ ի՞նչ է երգում, շատ դժուար է հասկանալ։

— Այժմ այնքան լաւ չի երգում—յարեց միւսը, ձայնը մի քիչ թուլացել, ոյժը կորցրել է. առաջ պիտի լսէիր, երբ երգում էր ամեն կողմից թափւում էին գլխին, ականջ դնելու . . . ։

## III

Երեկոյ է. մարտի երեկոներից մէկը—երբ Թ-ում արդէն ամառն է. վաղուց բարեպաշտ շիաները ծոմերը բացել են. շատերը նոցանից քաշուած տան մի անկիւնը բարձրաձայն զուրան են կարդում, որպէսզի լուսաբացին մի լաւ ընթրեն և յետոյ քնեն մինչև հետեւեալ օրուայ կէսը, կամ հէնց ամբողջ օրը, որ աւելի ոյժ ունենան սատանային յաղթելու և ծոմ մնալու։ Շատերը հաւաքուած զահվէխանէքում շրջապատել են ծալապատիկ նստած, կամ կանգնած կանաչ գլուխ սէյիդին և լսում են նրա սուրբ շրթունքներից բղխող զուրանի հատուածները, կամ հոգեշունչ քարոզները։

Փողոցները դատարկ են ու մութ. շորս կողմդ ոչինչ նշմարելի չէ. մարդկային բնակավայրի մէջ գտնուելդ զգում ես միայն զահվէխանաների դռնից դուրս ցոլացող աղօտ լուսից, կամ գիշերային պահապանների փսրրիկ լապտերներից։

Ես ու ընկերս-Ց. տուն ենք շտապում. մեր առաջից գնում է ծառան ահագին լապտերը ձեռքին, որով միայն կարելի է լինում որոշել ճանապարհը. հակառակ դէպքում մի սխալ քայլ մեզ կտանէ ամեն փողոցում փորուած լայնաբերան ջրհորներից մէ կի խոր յատակը. մենք խօսում ենք շատ ցած ձայնով. այդպէս է տրամադրում շրջապատը։

— Ա՜խ, կրկին այն ձայնը, սպասիր Ց. ասացի ես, բռնելով նրա թևից. և մենք կանգ ենք առնում, որպէսզի աւելի լաւ լսենք. ձայնը այս անգամ մօտիկից էր գալիս, սակայն շուտով կորուեց. մենք նորից առաջ ենք անցնում։ Ցանկարծ մեր առաջ, հեռու խաւարում գծագրւում է մի մութ կերպարանք. նա դէպի մեզ է գալիս և որքան մօտենում ենք միմեանց, այնքան աւելի որոշւում է. մարդկային է կերպարանքը։

— Նա է, հարցրի ես.

— Նա ինքն է.

— Կանգնեցնենք, թող մի քիչ երգէ։

Երկուսով էլ տրամադիր ենք լսել նորան։ Եւ նա սկսեց. օ՜հ, գրիչը թոյլ է, շատ թոյլ, արտայայտելու համար այն զգացմունքը, որ զարթեցրեց իմ մէջ այդ երգի փոքրիկ կտորը. կարծես ես տեսնում էի առաջիս ընկած որդեկորոյս մօրը, որ գրկած իւր որդու արիւնաշաղախ դիակը արտասուք է թափում, աղերս է կարդում։ Մարմնովս անհասկանալի դող է անցնում։

— Ի՞նչ ես երգում գու, սէր թէ ատելութիւն, վիշտ, թէ վրէժ—դուրս թռաւ իմ շրթունքներից. ես ինձ կորցրելով, մոռանալով որ նա ինձ չէ հասկանում. նա կտրեց իւր ձայնը և երկար գաւազանի ծայրով սկսեց ճանապարհը չոչափել, առաջ անցնելու համար. նա կոյր էր։ Ձեռքերս առանց թոյլատուութիւն խնդրելու բանականութիւնից, սրտիս բուռն զրգռմամբ մտան գրպանս, և ես մթութեան մէջ նրա ձեռքը կոխեցի ունեցածս դրամը. կուզէի ամբողջ գիշերը կանգնել ոտի վրա ու լսել, բայց նա մի քանի բառ մռմռալով մեզ թողեց։ Ցետ ենք նայում, նա արդէն կորած է խաւարի մէջ։

— Դրան ինչու են Բաբի կանչում, հարցրի ես չմտանալով այդ բառի իմաստը։

— Որովհետև բարիականութեան հետևող է, և ասում են, որ երգերի իմաստը վերցրած է այդ նոր վարդապետութիւնից։ Շատ բաներ են պատմում դրա մասին. ոմանք ասում են թէ դա առաջ եղել է մեծ մուշտայիդ, յետոյ Բաբին հետևելով պաշտօնից զըրկուել և աքսորուել է. միւսները պնդում են թէ հասարակ դերվիշ է և այլն։

— Այնուամենայնիւ հետաքրքիր է իմանալ դրա ով լինելը և երգերի իմաստը. ասացի ես, մանաւանդ որ, ինչպէս ասում ես, Բաբի վարդապետութիւնից են վերցրած, իսկ ես այդ նոր աղանդին ծանօթ չեմ։

— Բայց քո ցանկութիւնը դժուար է իրագոր-

ծել, որովհետև նա միշտ լինում է փողոցներում, այնտեղ երգում է, այնտեղ էլ քնում. իսկ փողոցում մի կտոր երգ լսելով, դու նախ չես կարող հասկանալ, երկրորդ, ենթադրենք թէ հասկացար էլ, մի երգով ինչ գաղափար կարող ես կազմել նրա մասին։

— Համաձայն եմ. բայց մի լաւ բան յիշեցրիր. չենք կարող արդեօք դրան մի անգամ բերել մեզ մօտ, ինչպէս անցեալ օրը բերինք Ջուղայից եկած հայ աշուղին։

— Գուցէ յաջողուի . . . ։

Ես մի մեծ գիւտ արածի պէս ուրախութիւնից վեր վեր եմ թռչում և քիչ է մնում դռան սոյնակը կոտրեմ ուժգին հարուածներովս. դպրոցի ծերունի ծառան բակի դուռը բաց է անում և մենք ներս ենք սլանում։ Ամբողջ գիշեր ես այդ երեկոյ լսած երգի ազդեցութեան տակ եմ։

## IV

Մեր դպրոցում կար և մի պարսիկ ուսուցիչ, պարսկերէն լեզուի համար. նրան ասում էին Միրզա և մինչև վերջ էլ, նրան ես ճանաչում էի այդ անունով. շատ յաճախ Միրզան գալիս էր ինձ մօտ, խօսում էինք, վիճում և շատ անգամ էլ միասին ճաշում, կամ թէյ խմում։ Առաջին անգամից ես շատ զարմացայ թէ նա ինչպէս իրեն թոյլ է տալիս մի „անհաւատի“ հետ նստել, կանգնել, և զարմանքս աւե-

լի սաստկացաւ, երբ տեսայ որ նա չէ խորշում ոգելից ըմպելիքներից։ Թէև Պարսկաստանում ընդհանուր ախտ է ոգելից խմիչք գործածելը, սակայն այդ կատարւում է գաղտնի. իսկ Միրզան դիմին խմում էր այնպէս, ինչպէս մի անցորդ մահմեդական, որ ծարաւ էլ չէ, սակայն կանգ է առնում մզկիթի դրան մօտ կոկորդը թրջելու այնտեղ դրուած տակառի ջրից և դրանով իւր կրօնական վեհ պարտականութիւններից մէկն է կատարում։

Բայց ինձ աւելի զարմացնում էր Միրզայի ազատամտութիւնը. շատ յաճախ նա դատափետում էր մահմեդականների ֆանատիկոսութիւնը. փորձում էր խօսել լուսաւորութիւնից, գրականութիւնից և այլն։ Գալանիքը պարզուեց, երբ ես իմացայ որ Միրզան աղանդաւոր է—բաբիական է։

Այդ ես վաղուց գիտէի, և մի միտք ծագեց ինձանում. արդեօք Միրզան չգիտէ ով է կոյր Բաբին. կամ չի կարելի նրա միջոցով նրան այստեղ բերել։ Եւ միւս առաւօտեան, երբ Միրզան ըստ սովորականի՝ դասերն սկսելուց կէս ժամ առաջ մտաւ իմ սենեակը, ես նրան հարցրի.

— Միրզա, դու ճանաչում ես կոյր Բաբին,

— Կոյր Բաբի, աշուղին։

— Այո։

— Կայ արդեօք Թէհրանում մի բաբի, որ չը ճանաչէ նրան։

— Իսկ նա ի՞նչ է երգում, գիտես։

— Մի՞թէ կայ Թէհրանում մի բաբի, որ չիմանայ թէ նա ի՞նչ է երգում։ Նրան մենք անուանում ենք, կամ աւելի ճիշտն ասած՝ իրանից ենք սովորել անուանել „Վրէժի Երգիչ“, կամ „Հալածանքի Ծնունդ“։ Նա այժմեան բաբիների մեծ վարժապետն է։

Ես ուրախացած այս նոր տեղեկութիւններով, թոյլ չտուի յարգելի Միրզային շարունակել իւր պատմութիւնը և ընդհատելով նրա խօսքը հարցրի։

— Իսկ նրան չէ՞ կարելի մի անգամ բերել այստեղ։

— Այդ շատ դժուար է, որովհետև նա ոչ մի տուն չէ մտնում. մի միայն երբեմն, այն էլ շատ հազիւ գալիս է մեզ մօտ . . . թաղը. նախկին քաղաքապետ Եահհա Դովլէի տունը, որտեղ մենք դաղտնի ժողովներ ենք ունենում։

— Բայց նա քեզ կը վստահանայ, դու կարող ես նրան բերել այստեղ, խնդրում եմ, Միրզա, մի մերժիր, եթէ դու ցանկանաս, անշուշտ կյաջողեցնես։

— Շատ լաւ, ասաց Միրզան, շրկարողանալով դիմանալ իմ բուռն թախանձանքներին. միայն ոչ ոքի չասես։

— Ուրեմն այս երեկոյ կսպասեմ։

— Այդրան շուտ չեմ կարող խոստանալ, միայն կյաջողեցնեմ անշուշտ, ասաց Միրզան և շտապեց դասատուն։

Այս բոլորը յիշում եմ—կարծես երէկ էր. իսկ այն երեկոն, օհ այն երեկոն—երբէ՞ք, երբէ՞ք չեմ կարող մոռանալ . . .։

## V

Ճրագի համեստ լուսով ողողուած սենեակում նստած ենք չորս հոգի։ Մեր դէմ ու դէմ, մէջքը պատին յենած, գաւազանը ձեռին, կանգնած է կոյր Բաբին։ Ես մտքերի մէջ սուզուած անթարթ նայում եմ նրա կմախք դարձած դէմքին, փոս ընկած, խաւար աչքերին։ Նա երկու ձեռքով գաւազանի վրա յենուելով սկսեց։

„Ցիեղերքի այն փոքրիկ անկիւնում, որը մեզանից կոչւում է աշխարհ և որի վերայ ազատ բանում են վարդերն ու շուշան. որի վերայ են վախկոտ նապաստակն ու հզօր առիւծն իրանց որսն անում. որտեղ մեծ ծովն ու փոքրիկ վտակը ունին միշտ իրանց բնակարաններ. որտեղ շնչաւոր ամեն մի էակ սնունդ է առնում.—այդտեղ, այդ ազատ ու լայն աշխարհում ճակատագրի որոշմամբ՝ յանկարծ մի օր գոյութիւն ստացաւ մի հէգ ու թշուառ, խղճուկ արարած“։

„Նա մի մանուկ էր,—ինչպէս լինում են բոլոր մանուկները. նա չէր տարբերւում և ոչ մի բանով իւր նմաններից, միայն թէ նորա անմեղ մարմինը փոխանակ բեհեղ, ազնիւ կտորի՝ լաթերի մէջը գտաւ իւր մրափ“։

„Նորա խեղճ հայրը շատ ուրախացաւ, երբ տեսաւ նորան, բայց իսկոյն նորա սրտի խորքերից

մի կսկծալի հառաչ դուրս թռաւ, բանի որ լուծը՝ իւր վզին դրուած, աւելի սաստիկ պիտ ճնշէր նորան։ Եւ նորա անմեղ, մանկական ճիշը սաստիկ վրդովեց իւր մօր հանգիստը"։

„Աստծու ստեղծած վառ արեգակը զլացաւ իրան թարմ ճառագայթով կազդուրել նորա մատաղ մարմինը, բանի որ նա միշտ դաշտերից հեռու, կանաչ պարտիզի թարմ ծաղիկներից ընդմիշտ զրկուած, հազիւ շնչում էր ընդարձակ երկրի ստորին յարկում. նորա սուր ճիշը տարածւում, թաղւում, անհետանում էր գետնափոր խուղի խուլ անկիւններում և անլսելի մնում Արարչին"։

„Նա միշտ զուրկ մնաց հովասուն լերան կենսատու օդից ու նորա մանուկ լսելիքները չը փայփայուցան դառնուկի քաղցրը, անուշ մայիւնից. նորա լուռ, մարմնոյ, բայց շատ գեղեցիկ զոյգ աչիքները չը վայելեցին մեծ տիեզերքի ցիրուցանիր ձեռակերտ գորգի երփներանգ գոյների շքեղ, պէսպէս պերճանքը"։

„Հոգը չուզեցաւ իւր վերայ կրել նորա տարիքի թոյլ ծանրութիւնը. վճիտ առուակը զլացաւ յաւէտ անդրադարձնել իւր հայելումն նորա վշտահար, նիհար պատկերը. մեղմ սիւքը նորա խուղից շատ բարձր հարթեց իւր ուղին, որպէսզի յանկարծ չըդիպչի նորան՝ շարատաւորուի. արեգը իրան ճառագայթները սառնամանիքի միջոց դանդաղաց հազորդել նորան"։

„Ու տիեզերքիս շքեղ տարիքն այսպէս ան-

ՀՍՍՌ-Ի ԳԱ ... ՍՍՍՌ-Ի ... Ա. ... Ա. ... ՍՍՍՌ-Ի ...

1957-58

հաշտ մնացին նորան ծննդեան առաջին օրից, քանի որ նորա լերկ թևիկները չէին բարուրուած անգին բեհեզի, կերպասների մէջ . . . "։

„Եւ նա սովորեց աշխարհին նայել իւր սառեկրեայ, խաւար խրճիթից, ու նորա սրտում բարդուեցան անէծք, լեռնաչափ վշտեր. և նա իւր անշուք որբանից երդուեց անենց նզովքի շանթեր արձակել իւր նմանների բիրտ պարանոցին, նախատինք կարդալ անգութ մարդկութեան, անողոք, անխիղճ ճակատագրին"։

„Եւ բնութիւնը, կարծես թէ, լուիկ փսփսում լինէր նորա ականջին. աշխարհի ազատ՝ քեզ փակ է ուղին, աշխարհը լայն է, իսկ քեզ վիճակուեց սիրահար մնալ անձուկ դագաղին. ստրուկ ես ծնուել, պետք չէ ստրկին յանդուգն դուրս գալ ընդդէմ բնութեան . . . և այդպէս ճնշուած բիրտ լծի տակին ճակատագրի՝ ստրուկ պիտ մեռնիս, անէծք կարդալով ամբողջ մարդկութեան"։

„Ու նա լսում էր միշտ այս խօսքերը, և նորա սրտում նախանձի թոյներ աւելանում էր։ Նա նախանձում էր վեհ, բարձր սարին, որ երբեւ կոթող աշխարհի փառքին, հպարտ գագաթը երկինք էր ցցել, ամպերը թողած է՛լ վեր բարձրացել, կապոյտ երկինքը ընտրել էր միայն զրոյցի ընկեր"։

„Եւ որպէս կարմիր, անմեղ վարդը, կամ վայրի ծաղիկ՝ շար ձեռքով պոկուած իլան արմատից. արևից հեռու, թարմ օդից զրկուած՝ օրէցօր թոշ-

նում, մահուան է դիմում, բայց մինչև վերջին հրաժեշտ տալը իրեն արմատին, մնում է սիրող աղատ օդն ու լոյս. մինչև վերջին շունչ բողոք է կարդում ճակատագրին-իրեն հալածչին՝ նա իւր խըրճիթում խաւար, մթագին՝ մնաց միշտ փափագ դրսի արևին. և իրան սրտում կաթիլ առ կաթիլ բողոքի շանթեր դիզեց, պատրաստեց՝ տեղալու մի օր իւր նմանների անարդ ճակատին. և մնաց յուսով, թէ երբ էլ լինի, պիտի խիզախէ իւր ստորերկրեայ բնակարանից դէպի լեռների վեհ գագաթները, դէպ Աղատութեան Ոգու աթոռը, անոգոր կերպով յափշտակելու նորանից այն՝ որ պլացան տալու, կամ թէ խլեցին իւր օրօրոցում իրան ձեռքերից“։

„Անդուսպ ատիւծից օրինակ առած՝ անվեհերութեամբ չարդեց վանդակը, ոտնատակ տուեց իրան խրճիթը-դարերից ի վեր նուիրագործած իւր նախնիքների բնակավայրը, ու դուրս շտապեց մթութեան ճանկից դէպի լուսափայլ, վառ արեգակը“։

„Մենակ եմ, գոչեց. երկնային Ոգի, Դու, որ բարձրացած երթերից էլ վեր, գահիդ ոտքերը ամպերին յենած՝ ծաղը ես կարդում երկնի ստրուկ երկրի խեղկատակ մարդոց խմբակին. Դու ինչու համար պատնէշ ձգեցիր, մեզ տարբեր ուղի ու կեանք տուեցիր. մէկի շրթունքին ծիծաղ ու ժպիտ, միսին թախծի անօթ շինեցիր. մենակ եմ, տուր ինձ՝ ինձ նման ընկեր. Քո մի նշանով կամ վայրկենապէս

ինձ էլ թռցրու դէպ երթերային այդ ազատ ուղին, կամ թէ վերևից հուր-կրակ տեղա, ջնջի՛ր, կործանիր հատ պարիսպները, որ արգելում են կենսատու օդին ազատ արշաւել թէ դէպ երկնամբարձ բարձր ապարանքը և թէ գետնափոր խոնաւ խրճիթը. . . “:

„Ու նա վազում էր փրփուրը բերնին կանաչ դաշտերով“:

„Սիղաւէտ մարգը, կարկաչուն առուն, զարնան նորազարդ երփներանգ զորգը նորան մի բոպէ չեն կասեցնում. հատ ցուլը ձեռին՝ գիշեր, թէ ցերեկ անտառ, անապատ, սար, դաշտ ու հովիտ ոտի տակ տուած՝ վազում էր յառաջ“:

„Որքա՜ն փուչ, տատասկ նորա սրունքից արիւն ծծեցին. որքա՜ն վարդ, աւազ նորա երակի կարմիր հեղուկով իրանց ծարաւը յագեցնում էին... իսկ նա չէր նայում, չէր ուզում տեսնել, թէ ի՞նչ էր ընկած իրան առաջը“:

„Հև ի հև, ծարաւ, տանջալից դէմքով, թաթիծն աչքերին, ահռելի սարը ոտի տակ տուած՝ դնում էր վերև“:

„Կանգ առ, ստահակ, յանկարծ նա լսեց լիրան կատարից Եթերի Ոգու սոսկալի ձայնը, և երկնի փայլակն շեշտակի անցաւ նորա աչքերով ու ներս թափանցեց մինչև ուղեղը“:

„Ու նորա ըմբոստ, յոգնած ոտքերը մեխուեցան հողին, նորա դաւառան, գողդոջուն ծնկներն խոպառ ծալուեցան, և նա ուշաթափ փռուեցաւ գետնին“:

„Գլուխը դրած թախծապատ երկրի ստրացող կրծքին նա արտասուում էր“։

„Եւ մեղմ սիրի հետ նորա ականջին երկրի սիրտը այսպէս փսփսաց“։

„Քեզ հետ է Բաբը. թոյլ անապատը, լեռներ ու դաշտեր, մարդ չնչաւոր էակների մէջ, քեզ գտիր ընկեր, և դու կտանաս Բաբի բանալին ու կսլանաս երկրից էլ վեր. ստրուկ ես ծնուել, ազատ պիտ մեռնիս. նզովք մի՛ կարդար. ես չեմ հաստատել քեզ երկրից զատող հաստ պարիսպները. դուք հաստատեցիք և դուք պիտ քանդէք նորա հիմքերը . . . “։

„Որքա՞ն լաց եղաւ, ինքն էլ չիմացաւ, միայն երբ զարթնեց, զգաց որ շուրջը—երկնի երեսին, աշխարհի վերայ սև քող էր պատած. շատ շարշարուեցաւ, ի զուր աշխատեց իմանալ ի՞նչ էր անմոփանցելի այդ խոլ խաւարը. և յանկարծ զգաց իրեն ապիկար այդ բանն հասկանալ—յաւէտ զբրկուած էր նա երկու աչքից . . .“։

„Չիմացաւ ինչու և ուր է գնում, բայց խարխափելով առաջ ընթացաւ. ուխտեց մինչև վերջ վրէժի վիշտը ու զայրոյթ երգել, սև տառապանքի դառն արտասուքով իրան հալածչի սիրտը խոցոտել . . . ։ Եւ նա երգում է“։

„Ես վիշտ ունիմ՝ այն լեռնաչափ. հոգիս վրդով, միտքս մոլոր, ինձ մխիթար ես կուզեմ։ Մխիթարիչ փոքրիկ պատկեր—մի լուսատու ահա աստղ, խուլ ու թանձր խաւարում. մօտ եմ վազում, գրկեմ նորան,

փարեմ կրծքիս, գուրգուրեմ . . . բայց երազ է, նա փախչում է. երկու աչքով ես կույր եմ“։

„Որդեկորոյս մայր եմ ես. սարեր ընկած, քարի առաջ, լերան գիմաց, ձորերի մէջ ամեն իրի հարց եմ տալիս, գարդս լալիս, որդիս խնդրում. փնտռում եմ մի շոր քար, գլուխս դնում այդ քարի վերայ ու լսում հովուի սրտի խորքերից բղխած սրնդի անուշ մեղեդին. նա ինձ կանչում է. ելէ, ահա որդիդ. ձեռքս մեկնում եմ, առաջ եմ վազում...բայց երազ է, նա փախչում է. երկու աչքով ես կույր եմ“։

„Ես սիրտ ունիմ, սիրտս մեծ է, խոր, անյատակ, որպէս անհուն ովկիանոս. խոր ովկիանի անդունդներում տարածուած են սրտիս անթիւ, վշտով լեցուն, անմխիթար լարերը. մարդ եմ ուզում, սիրտս մտնի, զարկէ մեղմիկ թմրած, քնած լարերին. և այն ժամանակ սրտիս լարերը ողբագին ձայնով դուրս կը վիժեն իրանց միջից անթիւ վշտերը։ Ահա ընկերս, գտայ նորան—ձեռքը մեկնեց, սփոփուած եմ ես յաւէտ . . . բայց չքացաւ, ա՜խ դա սուտ էր. երկու աչքով ես կույր եմ“։

„Կեանքից զզուած, բախտից փախած մարդու նման անտառների պուրակներում զովանում եմ ու տառապում միայնակ. մեծ, հնօրեայ ընկուզենին սպարթախիտ տերևներով ինձ ծածկում է արևից. մի քանի քայլ ինձնից հեռու պարզ, սառնորակ, յըստակ, վճիտ մի առուակ է հանդարտ պարում քշքշան. և ընկուզի թարմ ճիւղերին սոխակները սիրով

լցուած դայլայլում են մի վայրդեան շարական. կեանքս ահա, յետ է գալիս, այժ եմ առնում. դարձեալ մոռացած, իբրև զինուոր մի անվեհեր՝ կեանքի ահեղ կռուի դաշտն եմ շտապում... բայց նա չկայ, դա երազ է. երկու աչքով ես կոյր եմ՝՝։

,,Ծովը ընկած, գեկը կորցրաց, անյոյս, լքեալ մի նաւորդ եմ. մարտ եմ մտել, մարտնչում եմ ուժից ընկած. բազուկներս դաւաճան են. անդունդն առաջս է ահա. ծովը կապոյտ, վերը կապոյտ, շուրջս մշուշ, ցածը անդունդ, պատրաստւում եմ ասել վերջին փառաբան. ձայն եմ լսում, քաջալերիչ ձայն է գալիս, նոր շունչ տալիս, նոր եռանդ. մտերիմ է, եղբօրս ձայնն է. ահա ձեռքը ինձ է մեկնել. շտապում եմ նորան գրկել. բայց նա չկայ, դա երազ է. երկու աչքով ես կոյր եմ՝՝։

,,Ճո՜ւրջս, շո՜ւրջս լուռ անապատ, անապատի լուռ խորքերում, արևի տակ միշտ շիկացող աւազներում մի ովազիս եմ փնտռում. նստեմ այնտեղ բիչ զովանամ, նոր շունչ առնեմ, հանգստանամ, անծայր ուղիս նորից բռնեմ, ճամբայ ընկնեմ. ահա գտայ և նստում եմ. այրուած բերանս մօտ եմ տանում, պապակ շրթունքս անմահական ջրով թրջեմ- բայց նա չկայ, դա ցնորք է. երկու աչքով ես կոյր եմ՝՝։

,,Երգ եմ ասում՝ մարդիկ խուլ են, ինձ չեն լսում. վիշտ եմ պատմում՝ ծիծաղում են. ես խընդրում եմ՝ ինձ ծաղրում են. մարդ եմ ուզում, երգս լսի. եղբայրական, ընկերական սիրոյ երգիս տայ

արձագանգ. վիշտս պատմեմ, ինձ հասկանայ-մխի-թարի. ինձ հետ ողբայ, ինձ հետ խնդայ. ուրախ ճիշիս, ախուր վայիս լինի ընկեր... Բայց նա չկայ. երկու աչքով ես կոյր եմ"։

,,Հողից զրկուած, տանից զրկուած, անհայրենիք՝ երկրի մի խուլ անկիւնում ես մեռնում եմ. ճառեր չրկան, բառեր չրկան, ոչ հոգեոր շարական. ընկեր կուզեմ, ինձ սրտակից մի ընկեր-անապատի մի հեզ գաւակ. գլխիս փոքրիկ, անշուք ու չոր քար դնի. աչքից թափած արցունքներով փոքրիկ քարս, սրտից թափած արեան շիթով իմ սեամած սգւոր սիրտս ողողի . . . . . .“։

Երբ սենեակիս դուռը բաց արի, ներս հոսող գարնանային զովարար քամին շոյեց արտասուքից այրուած աչքերս...։

Որդէն առաւօտ էր։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ ՍՍՀ
ZUUՌ-Арм ССР
Ա. ՍԵՄԱՇԿԻՑԻ ԱՆՎԱՆ